տեան Ա արժարանիս աշակերտներէն տասուիրեք հոգի՝ տարեկան հանդիսաւոր հարցաքննութենէն ետքը փառաւորապէս իրենց հայրենիքը կը դառնան։ Ո՛րչափ տարբեր են ասոնք ալ այն վիճակէն՝ յորում կը գտնուէին հոս եկած ատենին, և յորում Թերևս պիտի մնային եթէ եկած չըլլային. Թող հայրենիքը և արժանաւորութիւն ճանչցող բարեսէր անձինք վկայեն և ուրախակից ըլլան մեզի։

Ա՝ենք կը համարինք որ եթէ այս մեր ընտիր սանները իրենց առած դաստիարակութեան սկզբունքները անաբատ պահեն, և լսած խոհական խրատները յօգուտ անձանց և ազգին ըստ արժանւոյն 'ի գործ դնեն, վարժարանիս վերատեսուչներուն և կամ անոնց ճշմարիտ բարեկամացը աշխատանք չմնար՝ իրենք զիրենք պաշտպանելու որ և իցէ զբպարտութեան դէմ։ Այս սակայն Թերևս անօգուտ չէ նորէն հոս հրատարակել վարժարանիս Յայտարարութեան համառօտ մէկ քաղուածը, որով ուզողը կը հասկընայ Թէ ո՞րչափ բարիք կրնայ յուսացուիլ այս կանոններովս կըրթուած աշակերտներէ՝ յօգուտ բարոյական յառաջադիմութեան ազգին, և 'ի հաւատարիմ ծառայութիւն իւրաքանչիւր տէրութեանց որոնց հպատակներն են։

ԲԱՂՈՒԱԾ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՈՐ Ի ՓԱՐԻԶ

Ի ԱՐԵՑԻՀԱՏԱԿ ազգասէրն Ի՛ղա Սամուէլ Ա՝կրտիչ Ա՛ուրատ իւր վեհանձնական առատաձեռնութեանը նպատակ դրած էր մեր ազգին բարոյական և ուսումնական լուսաւորութիւնը։ Ի՛ս նպատակին դիւրաւ հասնելու մտքով կամեցաւ որ իւր հիմնելու վարժարանին հոգաբարձութիւնը Ա՝ենետիկ եղած Ա՝խիթարեան Ա՝իաբանութեան յանձնուի. և նոյն վարժարանին մէջ որբ և աղքատ հայազգի տղաք ձրի, և ունևորները տարեկան Թոշակ մը վճարելով դաստիարակուին։

Ի՛սյս կարգաւորութենէն որոշ կերպով կ'իմացուի բարեբարին ունեցած երկու տեսակ գովելի դիտաւորութիւնը. մէկը այս՝ որ իր բարիքը վայելողները բարեպաշտ քրիստոնէական, ըստ ուշաւոր քաղաքական ու ճշմարիտ ազգասիրական դաստիարակութիւն մը ընդունին. և մէկալը՝ որ այս բարեաց մասնակից եղողները ըստ կարի բազմաթիւ ըլլան, և անով ալ ազգը աւելի շուտ լուսաւորուի։

Ա՝խիթարեան Ա՝իաբանութիւնը անտնօրինելի պարտք մը կը ճանչնայ իրեն այսպիսի աստուածահաճոյ դիտաւորութեան մը ճիշդ և հաւատարիմ գործադիր ըլլալ. ուստի հետագայ բարոյական՝ ուսումնական և տնտեսական կանոններով կը մատակարարէ այս ազգային բարիքը։

Ա. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Քրիստոնէական բարեպաշտ դաստիարակութիւնը ուղիղ բարոյականի մի միայն հիմն է. անոր համար վարժարանիս աշակերտները ամէն կիրակի և տօն օրեր հռովմէական ուղղափառ հաւատոյ վարդապետութեանց և բարի վարուց վրայ խրատ և կրթութիւն կը լսեն. վարժարանիս մատրանը մէջ ամէն հինգշաբթի և կիրակի, ինչպէս նաև ազգային սրբոց տօներուն և ուրիշ նշանաւոր օրեր, հանգստեան ամսոյն մէջ ալ ամէն օր, սուրբ պատարագին առաջիկայ կ'ըլլան, առաւօտ և իրիկուն միաբանական աղօթքներ կը կատարեն, ամիսը մէյ մը սուրբ խորհրդոց մասնակցելով կը խոստովանին ու կը հաղորդուին, և ատեն ատեն Փարիզու եկեղեցեաց հանդէսներուն ներկայ կը գտնուին։

Քաղաքական խոհեմ և զգուշաւոր կրթութիւնը յայտմէ որ աշակերտք կը սորվին ամենայն խոնարհութեամբ հնազանդիլ միշտ քաղաքական և եկեղե-

ցակման օրինաւոր իշխանութեանց, և անյողդողդ հաւատարմութեամբ ծառայել այն տէրութեանց՝ որոնց հպատակ գտնուած են ։

Ճշմարիտ ազգասէր կը համարուին ժամանակաւ այս վարժարանիս աշակերտները՝ հիմակուընէ ջանալով ճանչնալ, սորվիլ, ու յարգել ազգային լեզուն պատմութիւնն ու սովորութիւնները, առանց արհամարհելու օտար ազգաց գովելի կամ անտարբեր յատկութիւնները, մանաւանդ թէ խոհական ընտրութեամբ հետևիլ անոնց լաւ սովորութիւններուն, և իրենց անձնական կատարելութեամբքը օտարաց ալ սիրելի և պատկառելի ընծայել իրենց ազգը ։

Ասոնք և այսպիսի սկզբունք աշակերտաց միտքը դիւրին ու անջնջելի կերպով տպաւորելու համար, վարժարանիս վերակացուները մասնաւոր փոյթ մը ունին հեռու պահելու տղոցմէ ոչ միայն ամէն տեսակ վնասակար ու մոլորական գրքերը, այլ և ուրիշ որ և իցէ մոլորեցուցիչ առիթները ։ — Չեն կրնար տղաք դրսի մարդէ մը կամ վարժապետէ կամ ծառայէ և ոչ թերթ մը գրուածք առնել՝ առանց վերակացուաց հրամանին ։ — Չեն կրնար մինակ դուրս ելլել, և ոչ անծանօթ մարդու և կամ ծառայից հետ տեսնուիլ մինակ, կամ պտըտելու երթալ անոնց հետ ։ — Ծանօթի կամ ազգականի հետ ալ դուրս որ ելլեն՝ գիշերը չեն կրնար դուրսը մնալ ։

Տղոց քովը ամէն ժամանակ վարպետ, պահապան և կամ ազդարար կայ ։

Ցորեկը տղաք չեն կրնար երբեք իրենց սենեակը երթալ ։ Իսկ գիշերները իւրաքանչիւր տղուն սենեկին դուռը դրսէն փականքով կը գոցուի. Ներսը ամէն հարկաւոր բաները գտնուելէն զատ՝ զանգակ մըն ալ կայ որ պահապանին սենեակը կը հանէ. եթէ յանկարծ տղայ մը պէտք ունենայ՝ ան զանգակը կը զարնէ, և պահապանը կ'երթայ անոր դուռը կը բանայ ։

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Վարժարանիս մէջ աշակերտութեան չափն է հինգ կամ վեց տարի ։

Նոր եկող տղան պէտք է գիտնայ արդէն գոնէ հայերէն համարձակ կարդալ ու գրել, և թուաբանութեան չորս դասերը. բայց ըստ կանոնի կը պահանջուի նաև գաղղիարէն կարդալ ու գրել, համառօտ պատմութիւն սուրբ գրոց, համառօտ աշխարհագրութիւն և հայերէն քերականութեան առաջին մասը ։

Իսկ վարժարանիս մէջ դաս տրուած ուսմունքն ու լեզուները երկու կարգ կը բաժնուին. մէյ մը անոնք որ գէթ առ այժմ մեր ազգին մէջ ընդհանրապէս ամէն տղու հարկաւոր ճանչցուած են. այսինքն դպրութիւն կամ մատենագրութիւն ազգային և օտար, պատմութիւն ազգային, ընդհանուր պատմութիւն, բնական գիտութիւնք, չափաբանական գիտութիւնք, իմաստասիրութիւն, քաղաքական տնտեսութիւն, իրաւագիտութիւն, հաշուետումար վաճառականութեան, և գաղղիարէն՝ անգղիարէն ու տաճկերէն հասկընալ, խօսիլ ու գրել ։ — Մէյ մ' ալ այնպիսի ուսմունք՝ արուեստք և լեզուք որ ամէն տղու աւելի օգտակար կրնան տեսնուիլ իրենց յարմարութեանն ու իրաւացի փափաքանացը համեմատ. այսինքն ուրուագրութիւն, նկարչութիւն, վիմագրութիւն, ճարտարապետութիւն և ուրիշ մասնաւոր արուեստ մը կամ լեզու մը ։

Եթէ տղայ մը իր վարուքն ու յառաջադիմութեամբը արժանաւոր երևցած ըլլայ առանձին խնամոց, վարժարանը կուտայ անոր նաև տարի մը կամ տարի ու կէս աւելի ժամանակ՝ որպէս զի իրեն պիտանի և սիրելի ուսումն ու արուեստը կատարելագործէ ։

Վարժարանիս վերակացուները այս ամենայն ուսմունք ու արուեստները ըստ պատշաճի սորվեցընելու համար՝ դրսէն ալ ընտիր ու փորձ և վկայեալ վարժապետներ կը վարձեն ։

Դ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

Արդարութիւնը և մեր կարօտ ազգին իրաւունքը կը պահանջեն որ վարժարանիս մատակարարութիւնն ըլլայ ամենայն կարելի խնայութեամբ և ըզգուշութեամբ, և միանգամայն բարեբարին վեհանձնութեանը համեմատ վայելչութեամբ. ուստի մեծ ջանքով կը նայուի որ վարժարանիս ամէն բաներուն մէջ փայլին՝ զգուշաւոր չափաւորութեան հետ մէկտեղ՝ մաքրութիւն, դիւրութիւն ու լաւութիւն։

Վարժարանիս շէնքին ընդարձակութիւնը, խաղաղաւէտ դիրքը, առողջապարար օդը, և բարեկարգ կերպով կատարուած ծառայութիւնները այս վախճանիս ինչպէս որ պէտք է համաձայն են։

Աշակերտաց ձերմակեղէնը կամ ներքին հագուստները շաբաթը երկու անգամ կը փոխուին, մանաւանդ ամառը։ Արտաքին հագուստները երկու տեսակ են՝ երկուքն ալ միաձև ու միագոյն. մէկը չուխայէ՝ որ դպրոցէն դուրս ու հանդիսի օրեր կը հագնին, մէկալը գունաւոր կտաւէ՝ ներսը հագնելու համար, որ ատեն ատեն ալ կը լուացուի։

Կերակուրներն են սննդարար, փոփոխ, բաւական չափով, մաքուր ու վայելչապէս պատրաստուած։

Սովորական տօնի և զբօսանաց օրերէն զատ՝ հարկաւոր տեսնուած տարին աշակերտները մէկ երկու շաբաթ ալ գիւղագնացութեամբ օդափոխութիւն կ'ընեն ու կը հանգչին։

Հիւանդութիւն մը որ պատահի մէկուն, վարժարանիս յատուկ բժիշկը կը կանչուի ու շուտ մը պէտք եղած դարմանները կ'ըլլուին։

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ա. Աշակերտաց ընտրութիւնը կ'ըլլայ վարժարանիս վերատեսչին և կամ անոր Գործակալաց ձեռքովը ըստ ժամանակին և ըստ որոշեալ թուոյն. ուստի ատենէ դուրս և առանց օրինաւոր ընտրութեան ղրկուած տղան ընդունելի չըլլար։

Բ. Վարժարանս մնող տղայոց տարիքը տասներկուքէն պակաս ու տասնըհինգէն աւելի պիտի չըլլայ։

Գ. Արմենով տկար ու հիւանդոտ, կամ բարքովը ախտաւոր ու մոլի տղան չընդունուիր. անոր համար մկրտութիւնի վկայականին հետ կը պահանջուին ամէն տղէ նաև ծաղիկ ու վարդածաղիկ հանած ըլլալուն և բարուց լաւութեանը համար վկայագիրներ։

Դ. Տղուն ծնողացը, կամ որք տղուն մօտաւոր ազգականացը աղքատ ու չքաւոր ըլլալուն համար վկայական մը կը պահանջուի անոնց արուեստակիցներէն։

Ե. Երկու եղբարք 'ի միասին չեն ընդունուիր, բայց եթէ մէկուն տարեկան ծախքը վճարուելով։

Զ. Ինչենէ դուրս իր որդին ետ կանչողը՝ պարտական է գոնէ ամիս մը առաջ վարժարանիս վերատեսչին իմացընելու և ամբողջ ծախքը վճարելու։

Է. Երբոր տղայ մը ստահակ ու անուղղայ է, վարժարանիս վերատեսուչը ամիս մը կամ տասնըհինգ օր առաջ կ'իմացընէ անոր ծնողացը, և եթէ հարկ ըլլայ՝ առանց անոնց հաւանութեանը սպասելու ետ կը ճամբէ տղան։ — Այնպէս կ'ընէ երբոր տղայ մը հիւանդոտ ըլլայ. բայց ան ատեն բժշկին վկայագիրն ալ ձեռքը կու տայ։

Ը. Հարուստի զաւակը իրաւունք չունի աղքատաց բարիքը ձրի վայելելու, ուստի կարողութեանը համեմատ պիտի վճարէ ամբողջ թոշակ, կամ կէսը, կամ քառորդը, և կամ գէթ ճամբուն այսինքն երթալու և գալու ծախքը, և հարկաւոր ձերմակեղէնն ու մնոր պի-